# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N2584 - Ա** **14 ապրիլի 2009թ.**

ՔԱՆԱՔԵՌԻ 11-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 26 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱՅԱՆԵ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ, ԳԱՐԻԿ ԳԵՂԱՄԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Գայանե Անդրանիկի Պետրոսյանի (ծնված 11.01.1963թ.), Գարիկ Գեղամի Գևորգյանի (ծնված 10.04.1988թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Քանաքեռի 11-րդ փողոցի հ.26 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 782.52քմ, որից 736քմ մակերեսով հողամասը Գայանե Անդրանիկի Պետրոսյանին, Գարիկ Գեղամի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (վկայականի կրկնօրինակ տրված 27.03.2003թ. հ.1006395): Օրինական հողամասին կից օգտագործվող 46.52քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1970 թվականը, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 31.07.2008թ-ի թիվ ԵԱՔԴ-1593/02/08 վճիռը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման 12.09.2008թ. հ.1409, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 23.03.2009թ. հ.20/2-Ե/151 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 16.03.2009թ. հ.20-Ել-1825 եզրակացությունը, համաձայն որի Վ. Վահյան փողոցի հ.9 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Քանաքեռի 11-րդ փողոցի հ.26 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Գայանե Անդրանիկի Պետրոսյանի, Գարիկ Գեղամի Գևորգյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ

օրինական 736քմ մակերեսով հողամասին կից 46.52քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 46.52քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Քանաքեռ 11-րդ փողոցի հ.26 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Քանաքեռի 11-րդ փողոցի հ.26 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Գայանե Անդրանիկի Պետրոսյանի, Գարիկ Գեղամի Գևորգյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Քանաքեռ-Զեյթուն թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**